«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

«16» ապրիլի 2026թ.

«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
/ք. Երևան, Պուշկինի փ. 1/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(Պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին)

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից հայտարարված ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգում «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը որպես հրավերի պահանջներին համապատասխանող և առավել ցածր գին ներկայացրած ընկերություն հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից:

19.03.2026 թվականին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանն է ներկայացրել ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով պայմանագրի նախագիծը և առաջարկվել է այն կնքել երկու օրինակից և 10 աշխատանքային օրվա ընթացքում ներբեռնել համակարգ, միաժամանակ ներկայացնել որակի և պայմանագրի ապահովումները՝ բանկային երախիքի ձևով, կամ կանխիկ փողի ձևով:

Արդյունքում վերոնշյալ ժամկետում «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը համակարգում չի ներբեռնել ստորագրված պայմանագիրը և միաժամանակ չի ներկայացրել որակի և պայմանագրի ապահովումները՝ բանկային երախիքի ձևով, կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդ որում, հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ **ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ**